Ե

ԳԵՆՈՒԱՑԻՔ Ի ԿԱՖԱ

Յայտնի է մեզ ի պատմութենէ որ Գենուացիք ԺԳ դարէ սկսեալ մեծ դեր խաղացել են Կաֆայի մէջ, այլ ստոյգ չէ ո՛ր Թուականին նոցա ի ցամաք իջնալը ի Թէոդոսիա, և ոտից կառուան հաստատելը քաղաքիս մէջ, սակայն գիտեմք որ Թաթարաց իշխանութեան միջոց առաջին անգամ աստ ի ցամաք ելած են Գենուացիք։ Հաւանելի կը թուի մեզ հնադէտ Իրգեւիշ պրոֆեսսորին կարծիքը, որ կ'ենթադրէ թէ ի Կաֆա, 1204 ին, յետ առման Կ. Պոլսոյ ի Լատինաց եկած են խաչակիր իտալացի ասպետք, որոց մին R (Ռ) սկզբնանուն կրած է. վասն զի նոյն խուզարկութեամբ յերեւան ելած մի յիշատակարան կը հաւաստէ որ ի սկիզբն ԺԳ. դարու Ռանանով իշխան մի ի Կաֆա, արտօնութիւն կը շնորհէ տաւրիացի քաղաքաց մէջ անմաքս վաճառականութիւն անելու։ Այլ այդ իշխանը յայտնի չէ ո՛ր քաղաքէն լինելը՝ Վենետկեցի՞ է արդեօք թէ Գենուացի. զի այդ քաղաքացեաց նաւերն, անխտիր նոյն միջոցներն Սև ծովուն քաղաքներուն մօտ դեգերել են։

Այլ ի վերջին կէս ԺԳ դարու, Օրան-Դէմիր Թաթարաց խանին իշխանութեան միջոց, Գենուացիք օրինաւոր պայմանագրով Կաֆա քաղաքը, հանդերձ իւր շահեկան ծովածոցով, իրենց կառավարութեան կեդրոնավայր կը ստանան. և այս է համառօտութիւն նոցա պայմանագրին ընդ Օրան-Դէ-